

ՉԱՐԷՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՂՈԹՔ

Հօ՛ր թագաւոր, Քրիստոս, մեր Աստուածը, ապաւեն՝ քեզի ծարաւ եղողներուն եւ փրկիչ՝ նեղութեան մէջ եղողներուն: Դուն, որ անօրէններուն կողմէ չարչարուեցար մեզի համար, ցո՛յց փուր քու զօրութիւնդ եւ եկուր փրկէ՛ զիս, որ քու արիւնովդ գնեցիր: Թոյլ մի՛ տար որ Սափանան գերէ զիս, քու փրկածդ. մի՛ թողուր որ Չարը իրեն բնակարան դարձնէ զիս, քու սուրբ անունովդ կնքուած տաճարս. մի՛ ձգեր որ Թշնամին կոխկռտէ ու ծաղրէ զիս, քու Մարմնիդ մէկ անդամը. այլ՝ քու արարչական սիրովդ գթա՛ ինձի, քու արարածիդ:

Տէ՛ր, ողորմէ՛ մեզի, որ քու խաչդ դարձուցինք մեր միակ պարծանքը. թող քու խաչդ պահէ՛ մեզ տեսանելի եւ անտեսանելի Թշնամիէն:

Տէ՛ր, ողորմէ՛ մեզի, որ քեզ՝ Աստուածդ ծնող ամենասուրբ Կոյսին ապաւինեցանք. անոր աղօթքներով փրկէ՛ մեզ չարէն, որպէսզի առանց փորձանքներու կնքենք մեր պանդուխտ կեանքերը:

Քու տասներկու սուրբ առաքեալներուդ եւ անոնց աշակերտած հայրապետներուն սիրոյն՝ ողորմէ՛ մեզի:

Սուրբ Հռիփսիմեան եւ Գայիանեան կոյսերուն սիրոյն, ո՛վ Աստուած, ողորմէ՛ ինձի՝ մեղքերու մէջ կորսուածիս:

Սուրբ Գրիգորի եւ անոր լուսաւոր զաւակներուն սիրոյն, որոնց ձեռքով ճանչցանք քեզ՝ մեր Փրկիչը, եւ որուն ձեռքով Հայաստան աշխարհէն հալածեցիր դեւերու բազմութիւնը, այժմ եւս շուրջով հալածէ՛ Սափանան մեզմէ:

Սուրբ Վարդանանց եւ Արոմեանց զօրավարներուն եւ անոնց ընկերացող սուրբ քահանաներուն սիրոյն, որոնք Չարին

դէմ պատերազմեցան եւ անոր պատերազմը խափանելով Հա-
յաստան աշխարհի սուրբ եկեղեցիները կործանումէ փրկեցին,
հիմա՛ եւս, Տէ՛ր, խափանէ՛ Սաբանան իր չար գործակիցներով
միասին:

Սուրբ ճգնաւորներուն, վանական հայրերուն եւ անոնց
աշակերտած այրերուն ու կիներուն բարեխօսութեամբ՝ ողորմէ՛
ինծի, Տէ՛ր, որովհետեւ անոնք քեզմէ՛ շնորհք ստացան եւ քու
անունովդ յաղթեցին Բանսարկուհին բոլոր հնարքներուն. հիմա՛
եւս, Տէ՛ր իմ, քու յաղթող զօրութեամբդ յաղթահարէ՛
Հակառակամարտը, եւ մեզի յաղթանակ փուր անոր
ընդդիմութեան դէմ:

Մեր բոլոր սուրբ հայրապետներուն եւ առաջնորդներուն
բարեխօսութեամբ՝ որոնց իշխանութիւն փուրի ոտքի փակ
առնելու օձերն ու կարիճները եւ Թշնամիին ամբողջ
զօրութիւնը, շնորհէ՛ որ հիմա մենք եւս անոնց բարեխօսու-
թեամբ ոտքի փակ առնենք կամակոր Վիշապին գլուխը եւ
լռեցնենք ու կապենք բոլոր փեսակի հերձուածողներու
բերանները:

Կիներու ծնունդներուն մէջ մեծագոյնին՝ սուրբ Յովհան-
նէսի, եւ նախավկայ սուրբ Ստեփանոսի բարեխօսութեամբ՝
մաքրէ՛ մեզ հոգեկան ու մարմնական ամէն պղծութենէ, եւ
արժանի ըրէ՛ որ ճշմարտապէս, հոգիով եւ ճշմարտութեամբ
քեզի երկրպագողներուն հետ միասին երկրպագենք քեզի եւ
փառաւորենք ամենասուրբ Երրորդութիւնը. այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ